

# ԴԵՐԱՆՎԱՆ ԳՐԱԲԱՐՅԱՆ ՁԵՎԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՍՏԵՓԱՆ ԶՈՐՅԱՆԻ «ՎԱՐԱԶԴԱՏ» ԴԱՏԱՄԱՎԵՊՈՒՄ<sup>1</sup>

ԼՍՄԱ ՍԵԼԲՈՆՅԱ

Յուրաքանչյուր թեմա պահանջում է իր հատուկ լեզվական միջոցները: Դա առավելապես վերաբերում է պատմական թեմայով գրված ստեղծագործություններին, քանի որ այստեղ առաջ է գալիս նաև մեկ և խնդիր պատմական ժամանակաշրջանի ոճավորումը: «Չէ՞ որ հաճախ նյութով է պայմանավորվում ոճը» գրում է Զորյանը:<sup>2</sup>

Եիշտ է նկատված, որ պատմական ոճավորման խնդրի հետ սերտորեն առնչվում է լեզվական կերպավորման հարցը: Դա բացատրվում է նրանով, որ անցյալի լեզվական առանձնահատկությունների պատմական անհրաժեշտությունը գլխավորապես պայմանավորված է հերոսներին իրենց դարի ոգուն համապատասխան խոսեցնելու անհրաժեշտությամբ:<sup>3</sup>

Սովորաբար գրականության մեջ ազգային ձև ասելով հասկանում են միայն լեզուն, բայց նման մոտեցումը սահմանափակում է ազգային ձև հասկացությունը, ճիշտ է նկատում Զորյանը, որ *ազգային ձևը չափվելի լայն հասկացություն է, քան լեզուն*, քանի որ ազգային ձևի մեջ մտնում են պատմելաձևը, ազգային կոլորիտը, աշխարհագրությունը, հոգեբանությունը, կերպարների կերտման յուրահատկությունները, ազգային մտածողությունը և այլն:

Մի առիթով Զորյանն ասում է, որ իսկական գրողը ունենում է երեք հիմնական հատկություն. առաջինը ինքնուրույն լեզու և ոճ, որ բնավ նման չի լինում մյուսներին, երկրորդ՝ սուր աչք կամ սուր դիտողականություն, որ տեսնում է այնպիսի բաներ, որ ուրիշները երբեք չեն ունենում և երրորդ՝ համակելու և վարակելու ունակություն:<sup>4</sup>

Զորյանը մեր այն գրողներից է, որոնք անդրադարձել են պատմական անցյալին, մեր ժողովրդի հերոսական ոգորումներին:

«Իմ հետաքրքրությունը և իմ սերը դեպի մեր պատմությունը, - գրում է Զորյանը, - ինձ մղեց դեպի պատմական թեմատիկան, և ես գրեցի նախ՝ Սմբատ Բագրատունի պատմվածքը, ապա «Պապ թագավորը»:<sup>5</sup>

Զորյանի պատմական թեմատիկայով գրված ստեղծագործությունների լեզուն աչքի է ընկնում իր հարստությամբ, ճոխությամբ, լեզվական բազմազան ձևերի գործածությամբ:

Իր գրական գործունեության երկարամյա ուղու ընթացքում Զորյանը ոչ միայն հարստացրեց իր ստեղծագործությունների թեմատիկան, այլև հղկեց իր լեզուն: Դրա լավագույն արտահայտություններն էլ պատմական թեմատիկայով գրված նրա երկերը, որոնք նշանավորում են նրա արձակի ոճի զարգացումը:

Պատմական ժամանակաշրջանի ոճավորում ստեղծելու նպատակով Զորյանն իր պատմավեպերը գործածում է տարբեր հնարներ, տարբեր միջոցներ, որոնցից մեկն էլ լեզվական միջոցներն են:

Հասկանալի է, որ պատմական անցյալին անդրադառնալիս Զորյանն ըստ անհրաժեշտության պետք դիմեր գրաբարին և օգտագործեր գրաբարյան բառեր, բառաձևեր ու արտահայտություններ:

Սույն հոդվածը նվիրված է գրաբարյան դերանունների գործածությանը Զորյանի «Վարազդատ» պատմավեպում:

Դերանունը որպես խոսքի մաս առանձնահատուկ է նրանով, որ զուրկ է իմաստային կոնկրետությունից և խոսքի մեջ հանդես է գալիս հիմնականում փոխարինման գործառնությամբ:

Գրաբարյան դերանունները իրենց տարբեր հոլովաձևերով արտացոլված են Զորյանի պատմավեպերում: Նկատենք, որ դրանք գործածված են հերոսների խոսքում՝ նրանց խոսքը անհատականացնելու պատմական ժամանակաշրջանի երանգավորում ստեղծելու նպատակով: Օրինակ՝

«Եկած են անշուշտ դուքսի և *Սոցա* մարդոց հոգևոր կարիքների համար» (91):<sup>6</sup>

«... Եվ *բոլորեքյան* կիմանան ճշմարտությունը» (114):

«Ավագները *ամենեքյան* գոհ են նոր թագավորից» (103):

«*Նորա* արարքը կոչվում է վարպետ խորամանկություն» (154):

«... և *այսր ամենայնի*՝ կարևորություն չի տալիս սպառնալյաց» (254):

«որպեսզի բնավ դժգոհ չմնան *նորա*» (165):

Գրաբարյան դերանունների գործածության մեջ նկատվում են հետևյալ օրինաչափությունները: 1. Զորյանը դերանունների տարբեր տեսակները գործածում է հիմնականում իրենց ուղիղ ձևերով, որոնց մեջ բնական է, խախտումներ համարյա չկան:

Այսպես՝ ա) *ամենական* դերանուններ.

«Չէ՞ *նորա* նույնպես մերազնյա են» (364):

«*Նորա* հուզված են, քանզի դա համարում են անկարելի, անհավանական» (90):

«Իրենց դիրքին տիրանալու համար *նորա* կանգ չեն առնում անգամ ոճիրի առաջ» (133):

«*Նորա* ժողովրդյան լարում են արքունյաց դեմ» (318):

բ) *Ցուցական* դերանուններ.

«Պետք է ասել և մեկնել *սույն* կացությունը բարդ» (38):

«... անչափ վշտացած ես *սույն* եղեռնագործությամբ» (107):

«Երբ ոմանց բացատրում են նորա *սույն* այս ետին մտքերը» (197):

«Երբ է լինելու *դույն* խնջույքը» (164):

Պետք է նկատել, որ սույն և *դույն* դերանունների հետ Զորյանը գործածել է այս և այդ դերանունները սաստկական նշանակությամբ: Օրինակ՝

«Կեսար, *սույն* այս խնդիրը կարի բարդ խնդիր է» (108):

«Մանվելի *դույն* այդ տրամադրությունը հետևանք է իր եղբայր՝ սպարապետի սպանության» (284):

Ցուցական դերանունների *ուղիղ* ձևերից գործածված է նաև դա դերանվան հոգնակին: Օրինակ՝

«Եթե առաջին հերթին չպատժվեն *դորա*, մյուսները կհետևեն *նույա*» (286):

«Թե իցե *դորա* չեն հոռոմի լեզուն կտրողները» (285):

գ) *Որոշյալ* դերանուններ.

«*Բոլորեքյան* կիմանան ճշմարտությունը» (14):

«Իսկ նորա բոլորեքյան հավատարի՞մ են քեզ» (361):

«Այսօր, այդ, ավագները և մայրաքաղաքում գտնվող նախարարները, *բոլորեքյան*, հրավիրված են ավանդական կարգը կատարելու» (8):

«Պարզեցի նորան, թե այդ օրինակ մարդը *ամենայն* դյուրությամբ կարող է դրժել իր խոսքը» (106):

«... որ հիշում էին *ամենայն* մանրամասներով» (146):

դ) *Անորոշ* դերանուն.

«Սակայն լավագույն է չիմանա մի *ոք*» (112):

«Հեռացե՛ք, քանի մի *ոք* չի իմացել վերադարձը ձեր» (263):

«Ըստ երևույթի գիտեր մի *ինչ*, երբ պնդում էր այսպես կտրուկ» (115):

«Մենք նոցա կարևոր *ինչ* ունենք հաղորդելու» (263):

«Հեռացել է Կամսարական իշխանը և *այլք*» (272):

«Չեն հավատում և *այլք*» (196):

ե) *Ստացական* դերանուններ.

«Եվ ի՞նչ են պատասխանել *ծերայինք*» (247):

Բացի դերանունների ուղիղ ձևերից Զորյանը գործածում է նաև գրաբարյան դերանունների հոլովված ձևեր:

Օրինակ՝ հաճախ է գործածվում նոքա դերանվան սեռական հոլովաձևը.

«Շատ պարզ նկատեցի *նոցա* ներքին գոհունակությունը» (101):

«Միայն անել այնպես, որ *նոցա* ազդեցությունը չտարածվի ժողովրդյան մեջ» (280):

Նույն դերանունը գործածված է նաև այլ հոլովաձևերով (տրական, հայցական)

«Տանք մեր ազատությունը *նոցա* և համբերենք» (210):

«Որ Արմենիայի բոլոր չարամիտ գործերը ծագում են ի *նոցանե*» (345):

«*Նոցա* բացատրել են, թե հոռոմաց համար չէ, այլ արքունյաց, թագավորի» (306):

Գրաբարյան հոլովված ձևով է գործածված դոքա դերանունը.

«Մեզ մեղադիր կլինեն, անշուշտ, *դոքա* ապաստան տալու համար» (271):

«Հանգիստ իշխելու համար պետք է ոչնչացնել *դոքա*»:

Զորյանի մոտ ճիշտ է գործածված նաև սա ցուցական դերանվան սեռական հոլովաձևը՝ սորա ձևով, դա՛ դորա, նա՛՛ դորա ձևերով:

«*Սորա* մասին ես կուզեի խոսել առանձնապես» (103):

«Քանզի *սորա* էությունը նոր է միայն պարզվում» (103):

«Եվ *սորա* հետևանքը երևաց իսկույն» (103):

«*Դորա* համար որոշած են խստիվ պատժել *նոցա*» (307):

«Բայց դորա փոխարեն կսովորեք մեր լեզուն» (210):

«... Շապուհն իր գինու թասի վրա քանդակել է տվել Սուլշեղի պատկերը ձիուն նստած՝ ի հարգանս *նորա* վարմունքի» (106):

«... Ցանկալի է ավելացնել *նորա* քանակը և լավ հանդերձավորել» (103):

«Չեն հոժարի թագ դնել *նորա* գլխին» (18):

*Այլ* անորոշ դերանունը գործածված է թե՛ ուղիղ, թե՛ հոլովված ձևով, թե՛ ժամանակակից հայերենում այն գործածվում է իբրև գրաբարյան քարացած ձև: Օրինակ՝

«Պետք է պատժել ի խրադ *այլոց*» (286):

«... թե նրա և *այլոց* ենթադրությունը չի հաստատված» (119):

Հետաքրքրական գործածություն ունեն ստացական դերանունների ածանցական ձևերը՝ մերային, ձե՛րային, իւրային, որոնք հոլովվում են Ո պարզ հոլովիչով: 7

Զորյանը գործածել է և՛ մերոց, և՛ մերայնոց ձևերը: Հանդիպում ենք մերք ստացական դերանվան սեռական հոլովի գործածությանը, զուգահեռաբար գործածվում է նաև մերայնոց ձևը: Օրինակ՝

«Տեր աստված... Տեր հայրն *մերոց*, ցնորե՞լ է...» (111):

«Իսկ ինչու չսպասեցիք *մերայնոց* գալուն» (46):



«Նոր արքան երիտասարդ է և մերայնոց սովորությանն անծանոթ» (247):

«...չենք կարող միթե նույն անել մերայնոց համար» (149):

«Պալատական մեծերը նույնպես թվում են պարզ, հեզ մարդիկ: Անշուշտ հեռու են բյուզանդական վարչարարից, չունեն *մերայնոց* նման շքեղ հանդերձանք, բայց հարգանք են տածում առ հյուրը, առ օտարը» (101):

Այս ցուցական դերանվան սեռականը՝ այսր, հանդես է գալիս որոշյալ դերանվան նույն հոլովի հետ:

«Կարծրք նա այդպես էլ պատասխանել է թագավորի առաքած մարդոց... և ի բաց այդ և *այսր ամենուրի* կարևորություն չի տալիս սպառնալյաց» (254):

Գրաբարյան ճիշտ հոլովաձևով է գործածված նաև ամենեքին որոշյալ դերանունը, օրինակ՝ «-Փոխեն՝ մեր վճիռը. և մի՞թե դուրսին կլինի այդ, երբ մանավանդ, *ամենեցուն* ցանկությամբ հայտնեցինք այն թագա՞ր հուն, գահաժառանգին» (36):

Գրաբարյան դերանունների գործածության մեջ նկատվում է մի հետաքրքիր երևույթ, որ ըստ երևույթի բխում է գրողի մոտեցումից: Հաճախ Ձորյանը վերցնում է գրաբարի դերանունների հոլովված ձևը և հոլովում աշխարհաբարի կանոններով: Օրինակ՝ դա ցուցական դերանվան սեռական հոլովը դառնում է *դորան* Ձորյանը վերցնում է այդ ձևը՝ կազմելով դորանից՝ բացառականի ձևը, մինչդեռ գրաբարում դա դերանվան եզակի բացառականը լինում է ի *դմանե*:

«Միթե *դորանից* ծագել կարող է մինչևիսկ պատերազմ» (23):

«Թող հոռոմաց մայրաքաղաքը զմայլի դորանցով» (296):

«Եվ *դորանից* դուք՝ արմեններդ կշահեք» (210):

Նման ձևով գործածում է դորանով, դորանցով, սորանցից, սորսնով, սորանից ձևերը:

«*Սորանից*, աստվածային, կազմում են մի կարծիք» (108):

«Եվ շատերը *դորանից* մանր են, աննշան» (200):

«Ես խորհում եմ, որ *սորանով* եթե չվերանա լարված վիճակը, գեթ կմեղմանա» (197):

Նա դերանվան սեռական հոլովը կազմվում է նորա ձևով: Իսկ գործիականը՝ *նովա*, Ձորյանը նորա սեռականի ձևից կազմում է նորանով գործիականի ձևը, օրինակ՝

«...և ազատ խոսում եք *նորանով*» (208):

«*Նորանով*, որ կդառնաք կարգին ազգ» (210):

Նոքա դերանվան բացառական հոլովը Ձորյանը գործածել է գրաբարյան ի նոցանե(ե) ճիշտ ձևով, օրինակ՝

«Վերջապես արքա, հասու եղա որ Արմենիայի բոլոր չարամիտ գործերը ծագում են ի նոցանե...» (345)

«Այդ պարագային, արքա, ...գուցե հանձն առնի մեկ ուրիշը ի *նոցանե*» (232):

Սակայն ի նոցանե ձևին զուգահեռաբար գործածում է նոցանից սխալ ձևը: Օրինակ՝

«Մի՞թե սակայն *նոցանից* որևէ մեկը կարող է...» (295):

«Մեկը *նոցանից* բնավ չպետք է ջանա իշխել մյուսին» (326):

Գրաբարի սույն, դույն, նույն ցուցական դերանուններից աշխարհաբարում գործածվում են սույնը, դույնը, դուրս է եկել գործածությունից: Պատմավեպում հանդիպում ենք դույն դերանվան գործածության բազմաթիվ դեպքերի: Սակայն պետք է նկատել, որ գործածությունից դուրս եկած դույնը կարող է գործածվել այս ցուցականի հետ սաստկական նշանակությամբ՝ հենց, էլ: Օրինակ՝

«Իսկ ու՞ր է այժմ *դույն այդ* նամակը» (125):

Նույնը վերաբերում է սույն ցուցական դերանվանը:

Բավականին սխալ ձևեր են կազմված իւր ստացական դերանունից՝ յուրայինները (365), յուրայիններ (61), յուրյանց (214), յուրյանք (217):

Այս ամենով հանդերձ՝ Ձորյանը կարողացել է գրաբարյան դերանունների նպատակային օգտագործման շնորհիվ հասնել պատմական ոճավորման:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 1 Հոդվածը մի բաժինն է գրաբարյան բառերի ու արտահայտությունների գործածությունը Ստեփան Ձորյանի պատմավեպերում ստեղծագործության: Այստեղ խոսվում է գրաբարյան դերանունների կիրառությունների մասին:
- 2 Տե՛ս *Ստեփան Ձորյան*, Երկերի ժող., հ. 1, Երևան 1977թ., էջ 20:
- 3 Տե՛ս *Ֆ.Խլդաթյան Դ.Ղեմիրճյանի* «Վարդանանք» պատմավեպի լեզուն և ոճը, Երևան «Լույս», 1988թ., էջ 200:
- 4 Տե՛ս *Ստեփան Ձորյան*, Երկերի ժող. հ. 1, Երևան «Սովետական գրող», 1977թ., էջ 22:
- 5 Տե՛ս *Ստեփան Ձորյան*, Երկերի ժող. հ. 1, Երևան 1977թ., էջ 22:
- 6 Օրինակները վերցված են Ստեփան Ձորյանի Երկերի ժողովածուի 9-րդ հատորից, Երևան, 1983.: Փակագծում նշված են էջերը:
- 7 Տե՛ս *Ա. Աբրահամյան* «Գրաբարի ձեռնարկ» Երևան, «Լույս», 1976թ., էջ 86:

## ԳՈՒՅՆԵՐԻ ՄԵԾԱՐԵՆՑՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԿԱՐԻՆԵ ԱՌԱՔԵԼ ՅԱՆ

Որևէ հեղինակի խոսքարվեստը, նամանավանդ բառապաշարն ուսումնասիրելիս հաճախ են քննվում տարբեր բառախմբեր, ինչպիսիք են գնահատողական արժեքով օժտված բառերը, հուզաարտահայտչական երանգավորում ունեցողները և այլն: Սակայն անհրաժեշտ է փոքր-ինչ կանգ առնել նաև մեկ այլ բառախմբի վրա, որը թեև հույզերի, զգացումների անվանումներ չի ներառում, սակայն շատ ու շատ գրողների ու բանաստեղծների ստեղծագործություններում իր ուրույն տեղն ունի խոսքի արտահայտչականության, պատկերավորման ու ոճավորման գործում: Խոսքը գունամունքների և ընդհանրապես գույն խորհրդանշող բառերի մասին է:

Փաստ է, որ գույները շատ անգամ տրամադրության կամ հոգեվիճակի արտահայտիչ են, երբեմն էլ պարզապես խորհրդանիշ, բավական է հիշել խորհրդապաշտական գրական ուղղությունը: Ինչպես նշվել է «գույնի կառուցվածքի առանձնահատկությունները այն գործոններից են, որոնք բնորոշում են այս կամ այն արվեստի ոճական յուրօրինակությունը»:

Դարասկզբի արևմտահայ ականավոր քնարերգու Միսաք Մեծարենցի ստեղծագործության մեջ ևս գույներն ունեն բավական մեծ ու կարևոր դեր, ինչին կանդաղառնաճառք ստորև:

Շատ անգամ հենց գույներն են պայմանավորում խոսքի նրբությունն ու բանաստեղծականությունը: Իր անդրանիկ ժողովածուն հեղինակը անվանել է «Ծիածան», ինչն արդեն իսկ ընթերցողի մեջ գունային զգացողություն է առաջացնում: Մեծարենցը միակը չէր հայ գրականության պատմության մեջ, որ անդրադարձել է ծիածանին: Հիշենք Եղիշե Չարենցին, որի առաջին ժողովածուները մեկը ևս կոչվում է «Ծիածան»: Չարենցը ծիածանի բազում գույներից ընտրում է երեքը՝ կապույտը, ոսկին, մանուշակագույնը՝ որպես տարիքի ու տրամադրությունների խորհրդանիշ, և սրա հիման վրա կառուցում իր բանաստեղծական շարքերն, այսպես.

Երեք ճաճանչ, երեք երանգ, երեք գույն

Որ անցան-

Քույր, կապել են քո աչքերում, իմ հոգում-

Ծիածան:

Մեծարենցի ժողովածուում գույների նման խիստ շեշտադրում չկա, թեև վերջիններս պակաս խոսուն չեն: Այստեղ ավելի խոսքը գնում է խոհերի ու հույզերի մասին: Ինքը՝ հեղինակը, «Ինքնադատության փորձ մը «Ծիածան»-ին առիթով» հոդվածում գրում է. «Տեսնենք հիմակ, թե բանաստեղծին մտքին մեջն ինչպե՞ս ծիածանվեր են հավիտենական զգացումներն ու մտածումները»:

Մենք էլ փորձենք ներթափանցել մեծարենցյան գույների աշխարհը և տեսնել, թե այդ «ծիածանումն» արտահայտելուն ինչպես են նպաստել գույները «Ծիածան» ժողովածուում և հեղինակի մյուս բանաստեղծություններում:

Հեղինակի քնարերգության մեջ ամենից հաճախ կիրառվող գունանունը *կապույտն* է՝ ընդհանուր առմամբ 28 գործածություն: Սա պատահական չէ, քանի որ *կապույտն* իր տարբեր երանգներով /ինչպես նաև *սպիտակը*՝ հաճախ է խորհրդանշել մաքրություն, նրբություն և քնքշություն: Խոսելով Եղիշե Թադևոսյանի «Աստվածածին» կտավի մասին՝ Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանը գրում էր. «Աստվածածինը յուր կապույտ և մեղմ աչքերի արտահայտությամբ, մայրական գորով է, սեր, անձնվիրություն՝ առանց նկարչի կողմից արտաքին միջոցներով մարմնավորված լինելու այդ. իսկ որդին յուր մանկական թափկների մեջ բռնած սպիտակ և մաքուր աղավնու նման անմեղություն. երկու զուգորդված գեղեցկություններ, որ իբրև լուսավոր ճառագայթներ թափանցում են հոգուդ մեջ և ներքին, քաղցր բավարարության զգացումով համակում քեզ»:

Հետևենք մի քանի բնագրային վկայությունների. «Երկու բոցե թևերու մեջ ծովանկարն է սխրալի՜. – *Կապույտի՜*՝ փառքն ամրափակված շրջագիծով ոսկեդրվագ»/60/; «Ուր երկինքն ալ կը քնանա՝ *Կապույտներու* խորհուրդին մեջ երազելով Վաղորդայններն երջանիկ»/69/; «Ոսկի շաղով օժեցիր *կապույտ* ծաղիկն ակե-րուն»/122/; «Ու լույսերով պարածածկել հիվանդ հոգին. Քույր ունենալ ջուրին կարկաջն ու *կապույտ* բալ»/126/; «Հույսի շող մը գիս հավետ Կը կապե նուրբ *կապույտին*»/149/:

Ակնհայտ է *կապույտի* դերը խոսքի արտահայտչականացման, «գունավորման» գործում՝ անկախ այն հանգամանքից, որ բառը գործածվել է իր սովորական ածականական իմաստով կամ ստացել է գոյականական կիրառություն: Մի դեպքում այն խոստում ու հույս է պարգևում հուշերի աշխարհում ապրող քնարական հեղինակին, մեկ այլ դեպքում՝ գթառատ քրոջ պես գգվում հիվանդ հոգուն, մի երրորդ դեպքում՝ հայտնվում իր ողջ փայլով, շքեղությամբ ու վեհությամբ:

Հեղինակի չափածոյում *կապույտ-ի* կատարած դերը լիովին ըմբռնելու համար չափազանց կարևոր է անդրադառնալ այս բառի հոմանիշներին, որոնց դիմել է Մեծարենցը թե՛ կրկնությունից խուսափելու, թե՛ ոճական այլ նպատակներով մասնավորապես ներկայացնելու համար *կապույտ-ի* տարբեր երանգները, որոնցից յուրա-մանիշների հարստությունը գրողի ստեղծագործության մեջ նրա լեզվի հարստության և ոճաբանական հնարամտության վկայությունն է: Որքան բազմազան է հեղինակի օգտագործած հոմանշությունը, այնքան ավելի տարբեր մեթոդներ և հնարքներ են մտնում պատմողական հենքը, ու այնքան ավելի գյուտարար է գրողը»: